



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 02 » հունվարի 2022թ. 48-Ն

ք. Երևան

Ի ՓՈՓՈԽՈՒՄՆ N166-Ն ԱՌ 05.11.2021Թ. ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՏՐԱՄԱՉԱՓԱՐԿՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԻ

Հիմք ընդունելով Լաբորատորիաների և տեխնիկական հսկողություն իրականացնող մարմինների հավատարմագրման տեխնիկական կոմիտեի N32/1 առ 26.10.2021թ. որոշումը, «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի N003/C-003 առ 27.10.2021թ. Հավատարմագրման վկայագիրը, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության, Զերմային, ֆիզիկաքիմիական չափումների և ստանդարտ նմուշների տրամաչափարկման լաբորատորիայի վարիչ Գարիկ Մարտիրոսյանի N631 առ 01.06.2022թ. զեկուցագիրը և ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Չափման միջոցների տրամաչափարկման սակագները սահմանելու մասին N166-ն առ 05.11.2021թ. հրամանի Հավելվածի 4-րդ կետի «Հիգրոմետրներ, խոնավաչափեր (1 կետ)- 5000 ՀՀ դրամ» տողը փոխարինել «Հիգրոմետրներ, խոնավաչափեր (մինչև 3 կետ)- 15 000 ՀՀ դրամ, Հիգրոմետրներ, խոնավաչափեր (3-ից ավել ամեն լրացուցիչ 1 կետը)- 5 000 ՀՀ դրամ» տողերով:
2. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Տնօրեն

Ժամանակավոր պաշտոնակատար

ԱԼԲԵՐՏ ԲԱԲԱՅԱՆ